

ՅՈՎԱՍԱՓ ՍԵՐԱՍՏԱՅԻ

Յովասափ Սերաստային ժՁ. դարու տաղասացներից մէկն է. նորա մասին շատ քիչ բան է յայտնի մեր մատենագրութեան մէջ և այդ քիչն էլ միայն վերջին տարիներս յայտնի եղաւ: Տէվ-կանցը իւր «Հայերգ»-ի մէջ, 1882 թուին, հրատարակեց Յովասափի Սիրոյ տաղերը, առանց որ և է ցուցում տալու նորա անձի կամ ժամանակի մասին: Պրոֆ. Մաւր 1891 թուին իւր Изъ Лѣтней поѣздки въ Арменію աշխատութեան մէջ տեղեկութիւն է տալիս անցողակի կերպով Յովասափի ժամանակի և նորա մի աշխատութեան մասին*: Կ. Կաստանեանը 1892 թուին հրատարակում է «Հրեշտակն երևեցաւ Յովսէփայ հիւսին» տաղը Ղազար Ստամբուլցու անունով, 1897 թուին նորա մի այլ ստանաւորը «Վասն Ողորմութեան» Ծրիկի անունով** և Յ. Մանանդեան և Հ. Աճառեան իրենց «Հայոց Նոր Վկաները» ժողովածուի մէջ Վաղարշապատ 1903. էր. 373—385, նոյնը ժողովրդական հրատ., 1902, էր. 48, հրատարակել են Կոնճայ Սերաստայու ստանաւոր վկայարանութիւնը: Ա. Զօղանեանը 1912 թուին իւր «Հայ էջեր»-ի մէջ հրատարակել է Յովասափի ըստ իս մտնելից նշանաւոր քերթուածը «Աշխարհիս սահմանն է հանդ», իսկ «Վասն Ողորմութեան»-ը դարձեալ Ծրիկի անունով***: Բարեբաղդ ենք որ հնարաւորութիւն ունինք աւելի լրիւ տեղեկութիւն տալու թէ նորա անձի և թէ երկերի մասին †:

Յովասափը Սերաստայի Թաղէոս անունով մի քահանայի

* Եր. 14. տես նաեւ Եսայիակայ 1892. էր. 8. Հանդիս Ամս. 1892. էր. 255.

** Նոր ժողովածու, Ա. սրակ էր. 18. Դ. սրակ էր. 40.

*** Եր. 52—57.

† Ամաւր՝ 1914 թուին, երբ աշխատում էինք Վերջինի արքայական մատենադարանում, առիթ ունեցանց մանրամասն ծանօթանալու Ms. 07. № 805 սեւադրե նեա, որ դրուած է նայն իսկ մեր Յովասափի մտարտի և ի միջի այլոց պարունակում է նաեւ նորա տաղերի ժողովածուէ: Այդ առիթը բնծայեց մեզ պ. Զօղանեան, որ անհրամեշտ տեղեկութիւններ էր խնդրել ոչ միայն Յովասափի տաղերի, այլ և՛ կերպ՝ Կաթիւթիմէսի Աղէքսանդրո՝ պատմաթեան մանրանկարչութեան մասին, դրուած եւ նկարագորդուած նայն Յովասափի մտարտի. ժամանակ չսեւեմարով տեղն աւելոր քոյսը հարկաւոր կտորները արտադրելու. մեծագոյն եւ կարեւոր մասերը լուսանկարել տալի, որ այժմ ծառայում է իրան: Բնագիր ուսումնասիրութեան համար:

որդի էր. մօր անունն էր Շահփաշա. ունէր և մի եղբայր Գրիգոր անունով, նորա կինն էր Շահրէ: Յովասափ ինքք տուել է հօր համառօտ կենսագրութիւնը Բերլինի վերոյիշեալ ձեռագրի մէջ և թէ Ամասիայի ս. Յակոբ եկեղեցու մի Յայմաւուրքի մէջ, «Սաշ (Թաղէոս քահանան) ի Սերաստիոյ էր և ի տղայութենէ սնեալ էր ի վանորայս սրբութ՝ք», «հմուտ հին և նոր կտակարանաց»: Արուեստով «գրագիր» էր կամ «քարտուղի», այսինքն ձեռագիր-նէր արտագրող գրիչ, «քաղում գիրքս օ՛ճայինս գրեաց աշխատութ՝ք»: Հէնց Ամասիայի վերոյիշեալ Յայմաւուրքի կէտը, այսինքն մինչև Արաց ՓԲ և յունուարի ՓԹ,—վարք և յիշատակ ս՛ր հ՛րպացն Աթանասի և Կիւրղի—գրել է Թաղէոս քահանան ընտիր գրչութեամբ, մնացածը շարունակել է որդին՝ Յովասափ: Հայրը իբրև գրիչ շատ աւելի կարող էր, քան որդին, ուստի և իրաւամբ Յովասափ գրում է հօր մասին նոյն Յայմաւուրքի վերջին յիշատակարանում.

«Զիւր՝ գրած գիրն ի կարգի
 «ա (մէկ) գիր կամ քան դալատ շունի».
 Կամ «Ի մտաներուն ոսկի թափի
 Լաճվարդ և լոքն նորոգի.
 Աւաղ գգիրն ասեմ յայանի,
 Ար քարտուղ(ար)աց էր ցանկալի»:

Եւ յիրաւի. Թաղէոս քահանայի գրչութիւնը աչքի է ընկնում ոչ միայն իւր գեղեցկութեամբ, այլ և մաքուր և անսխալ ուղղագրութեամբ, մինչդեռ նոյնը շնոր կարող ասել որդու մասին: Տէր Թաղէոսի մանրանկարչական տաղանդն աւելի չափաւոր է, քան որդու շաշլած գովասանքը. որքան դասել կարող ենք մեր տեսած այդ միակ ձեռագրով. նկարչական ձևերն ու գծագրութիւնները կամոնաւոր, բայց միակերպ (շարլունական) և երկզունեան միայն:

Տէր Թաղէոսը ոչ միայն գրիչ էր և նկարիչ, այլ և, ինչպէս երևում է, տաղտուաց, Յովասափը իւր տաղերի և յերթուածների ժողովածուի վերջում բերում է և երկու ստանաւոր՝ հօր գրածը. առաջինը խրատական, 314 ա. երկրորդը՝ Աղերս առ Աստուած, 314^ա — 314^բ: Առաջինի վերջընթաց տողում հեղինակը յիշում է իւր անունը՝ «Եւ Թաթէոս հոգով շիւար...», իսկ երկրորդի վերնագրում յիշուած է հեղինակի անունը և աների սկզբնատառերը կազմում են «Բանք Թաթոսե», հէնց այս երկրորդ ստանաւորի տակն էլ որդին գետեղել է հօր վկայարանութիւնը 314^բ, որի մի մասը այժմ Ձեռագրի 253^ա է կազմում կազմի ժամանակ թերթերը տեղափոխութեան ենթարկուելով:

Կ. Կոստանեան իւր «Նոր Ժողովածու»ի Գ. պրակի Գ. երեսի մէջ յիշում է Քաթոս անունով մի տաղասացի, որի մի երգը «Հա մանք յամիս մարտին», 19 անից բաղկացած, կարող է այս Քաթոսինը լինել, եթէ մի ուրիշ ժամանակակցի՝ Քաղէսս վարդապետը չլինի, որի մասին խօսք կ'լինի քիչ յետոյ՝ Կոստանեանցը միայն վերջին տունն է մէջ բերում, երգչի անունն յիշատակութեամբ, իսկ «Քաղմազակի» մէջ (պր. Բ. եր. 8) ապուած է միայն առաջին տունը:

Փոքր ինչ աւելի երկար կանգ առանք Քաթոս քահանայի կենսագրութեան վերայ այն պատճառով, որ նա ոչ միայն մեր հեղինակի մարմնաւոր ծնողն է, այլ և հոգևորը: Հոր մօտ է ունի որդին դիրն ու դպրութիւնը, ժառանգելով միևնոյն ժամանակ նորա բանաստեղծական և նկարչական ունակութիւնները: Թովասափը իւր «Հասն լինելութեան» մեծ քերթուածը նուիրում է հօրն ու եղբորը (307^m) հետևեալ խօսքերով.

Այլ և եղբօրն իմոյ պարտն Գրիգորին,
 Որ պոխեցօ մանուկ ի շահրի ճիհանին *.
 Եւ ծնողաց իմոց վարժողի զրի
 Քաթոս ք'ն յիշատակ լիցին:

Բ.

Ե՛րբ պէտք է ծնած լինի Թովասափը, աւել շինք կարող մի բուն միայն յատնի է, որ նա աւելի աւագ էր, քան եղբայրը Գրիգոր, որ մեռաւ 1548 թուին (281^m), 32 տարեկան հասակում: Այդ դէպքին նա յատուկ ոտանաւոր ունի նուիրած. «Կաֆայ զ'ա աղէկ մանկանն Գրիգորի» (295^m), ուր յիշում է, թէ եղբօր հասակը և թէ մահուան տարեթիւր.

Երեսուն և ՚ր տարու վճարեց զկենքն արեան
 Ինն հարիւր և նսուն և է՛ն էր ի հայոց թվուն,
 Չարին խոլբակց եղբաւրս և կարեց զարևն յարերուն.
 Ոչ ինայից ծեր մաւրկան, ոչ եղբաւրն և ոչ որերուն:

Պէտք է ենթադրել, որ այդ թուին Թովասափն էլ մօտաւորապէս 35—40 տարեկան պիտի լինէր. ուրիշ հաշիւներ էլ հաւանական են դարձնում այս ենթադրութիւնը. Տէր Քաղէսոսը քահանայութիւն անկուց յետոյ՝ վախճանուել է 1542 թուին. «յունիսի ժդ. թվին ՉՂԱՅ: Քառասուն տարուայ քահանայութեան»

* Ենացրում բուն սողի վերայ գրուած է նախ «ի յայտնի(կ?) ամի» և ապա ջնջուած ևւ վերան «ի շահրի ճիհանին»:

Վերայ աւելացնելով ձեռնադրութեան կանոնական հասակի 25 տարին, կլինի 65. աւելի ծեր ենթադրել Տէր Քաղկասին մահուան ժամանակ, դժուար է. որովհետոյ զեռ ևս ի վիճակի էր Յայսմաուրքի նման մի մեծ գիրք զրել և նկարազարդել. ուրեմն և շէր հասած խորին ծերութեան կամ անկարութեան հասակին: Բացի զորանից՝ ամուսնու մահուանից վեց տարի յետոյ՝ 1548 թուին, Կրիզորի մահուան ժամանակ՝ զեռ ևս կենդանի էր երիցունին, ինչպէս տեսանք քիչ վեր և մէջ քերուած վկայութիւնից:

Մի հանդամանք ևս զօրացնում է այն ենթադրութիւնը, թէ հօր մահուան ժամանակ Յովասափը երիտասարդական հասակից շատ հետու չպէտք է լինէր: Վերոյիշեալ Յայսմաուրքի լուսանցքում, հօր մահուան թարմ ստրաւորութեան սակ՝ հետեւեալն է գրում.

Միտս իմ ստիպի սրտի սիրոյս
 Բան չկարէ հանել ի լոյս
 Ի վաղճանելն իմ տ՛ր սիրոյս.
 Խելքս իմ ցրեալ կայ ի ժամուս
 Քանզի պարիսպ ետ նա գերոյս
 Եւ խըրօտող ամեն գործուս.
 Ի քեզ յուսամ փրկիչ Յ՛ս,
 Այլ ճար չունիմ քան զքեզ յոյս:

Երեսունհինգից քառասուն տարեկան համարելով Յովասափին, 1548 թուին, ծնունդը պէտք է նշանակենք դարու առաջին տասնամեակի վերջին կամ երկրորդի սկզբին՝ 1508—1513 թ. թ.

Յովասափի մանկութեան մասին առ այժմ ոչինչ չգիտենք բացի վերոյիշեալից. թէ նա ուսել է իւր հօր մօտ, նորա աշխատութիւնները մեզ զազափար են տալիս, թէ ի՞նչ կրթութեան և պաշարի տէր էր նա. հին և նոր կտակարանի, վկայարանութիւնների ծանօթութիւնից աւելի հետու չէ գնում նորա գիտութեան պաշարը, ինչպէս և հօրն էր: Նորան սիրելի և ճաշակին համադատասխան էին յատկապէս ազգային և օտար սրբերի այնպիսի վկայարանութիւններ, որոնք խճողուած էին հրաշարան և առասպելախառն պատմութիւններով, որոնցից մի քանիսը նկարազարդել է և կաֆաներով ճօխացրել: Ծանօթ էր նա Պղնձէ քաղաքի պատմութեան, որի կաֆաներից ազգուել է ինչպէս կտեսնենք և տումարագիտութեան. ոտանաւորների նիւթ է դարձրել յիշելով օտար տումարագէտների հետ և Անանիա Շիրակացու անունը: Մի ուրիշ ժամանակակցի այդպիսի գործ այնքան նշանաւոր է համարուել, որ տարեգութեան նիւթ է դարձել. «Թ վին ա՛գ. կեզիցի

Ղուկաս վրձպն զՀայոց տօմարն ի յօրք հանեց՝, նա ծանօթ էր նաև իրենից առաջ ապրող մի քանի տաղասացնների երկերին, որոնցից և փոխառութիւններ է արել:

Առաջին տեղեկութիւնը Յովասափի մասին ստանում ենք 1535 թուին, երբ նա իրրե զրիչ պրտագրում և նկարագրագում է Սուր Կալիսթինէսի Աղէքսանդրի պատմութիւնը, վերջում գնելով յիշատակարանաձև մի ստանաւոր.

Եւ զգրող այսմ գրի

Եւ Յովասափ մեղաւք ի լի.

Որ ես ի յիմ ժամանակի

Զգործեցի ժառ մի քարի:

Այլ ծուլ կենաւք յատնւորի

Կեցայ տմարդ ես յաշխարհի

Եւ յամ ժամանակի

Հաւատեցա անշահ քանի:

Բայց խնդիր մի կայ իմ արտի

Որ ասեք մի տ՛ր ողորմի

Ինձ եղկելի մեղաւորի

Մեղսամակարթ սարկաւաղի

Եւ ի տ՛է ասնուք գրարի

Կոր պատրաստեաց յիւր հայրենի

Դասէ ի դասս աջակողմի

Յիւր փառքն ի հեռ իւր սիրելի:

Զ թուականիս

Թ՛դ աւելորդի

Գրեալ եզն քան և գործի

Թ՛գ ընդ Աղեկաօնդրի:

Անբաստիայ այս քաղաքի

Սրա սան ս՛ք կուսաւորչի

Փառք տանք, արհնենք զհայր և զորդի

Թէ ինչ քանք ստեղծեալ է յաշխարհի:

Այս յիշատակարանից տեսնում ենք, որ նա սարկաւաղ էր, բայց ոչ կուսակրօն. մի ուրիշ յիշատակարանից, գրուած 1542 թուին, Յովասափ իւր հօրն ու մօրը յիշելուց յիշում է և իւր կնոջը «Շահրէ»-ին: Այս յիշատակարանի թուականը քսա Տաշեանի աւելացրել է մի ուրիշը, հանելով անշուշտ Յովասափի

* Դրան Հայոց պատմ. գիրք թ. 1912. Թիֆլիզ. եր. 52. 41. Ղուկաս կեղեցու այդ մասին գրած յիշատակարանի մի հատուածը, Տաշեան թուցակ. եր. 354.

ձեռքով գրուած գլխաւոր յիշատակարանից, որ այժմ պակասուած է Արեւնայի Մխիթարեանց թ. 172 ձեռագրի մէջ^{*}, իսկ հինց Բերլինի այս ձեռագրի մէջ ևս նա յանախ յիշուած է 149^թ — 150^թ, 162^թ, 182^թ. Իւր ձեռագրի անունները՝ մի այլ ձեռագրում Յովսափը կոչուած է «դպիր», որպէս հեղինակ «Վասն երկոտասան կենդանակերպիցն»^{**} քերթուածի։ Գլխակարգութիւններն ու ոկուածքները ջոյց են տալիս, որ այդ աշխատութիւնը նոյն է մեր Յովսափ սարկաւազի աշխատութեան հետ, որ «Վասն լինելութեան» կրկի մէջ է մտած, և որեմե դպիր և սարկաւազ Յովսափների անձնաւորութեան տարրերութիւն չկայ։ Եթէ «դպիր» և «սարկաւազ» բառերի նոյնացումը ուսմական հասկացողութեան արդիւնք չէ, պէտք է ենթադրել, որ այդ ուսանաւորները գրուած են 1535 թուից աւելի վաղ, երբ Յովսափը միայն դպիր էր հասարակ, և յետոյ միայն 1548 թուին մտցրել է իւր «Վասն լինելութեան» աշխատութեան մէջ, որ իսկապէս կապ չունի ամբողջութեան հետ։ Եւ սարկաւազ մակդիրն է կրում և աւելի յետոյ, ինչու նա քահանայ շնորհադրուեցաւ հօր մահուանից յետոյ, ասել չենք կարող։ Հաւանօրէն մարմնական մի պահասութիւն ունէր, որի մասին ակնարկ կայ 1543 թուին գրած Յայսմաւորքի յիշատակարանի մէջ։

Աղէքսանդրի պատմութեան գրութիւնից մի տարի յետոյ 1536 թուին նա գրել է Կոկնայի վկայարանութիւնը պատմաւորով, որ հրատարակել են Յ. Մանանդեան և Լ. Աւանեսան։ Յովսափն իբրև ժամանակակից, գուցէ և դէպքին տեղատեղաւ, անտարբեր մնալ չէր կարող այնպիսի մի դարձուրելի եղեմագործութեան հանդէպ, որպիսին Կոկնայի նահատակութիւնն էր, որ մուտք է գործել նաև Սերաստիայի շրջակայքի հետ կապուած ժամանակագրութեան մէջ. «Թուին 226 գիտղայ Կոզլայն նահատակեցին ի Սերաստիայ»^{***}

Լ. Տաշեանի Յուլիանի համեմատ 1543 թուին Յովսափը գրել է մի Ոսկեփորիկ խառը բովանդակութեամբ իւր գործածութեան համար՝ յիշատակելով իւր մերձաւորների անունները, ի միջի այլոց և իւր կնոջը, անշուշտ նոյն թուականի առաջին ամիսներին, երբ դեռ չէր մեղած հայրը՝ Քաղէոս քահանայն, արդ

* Տաշեան Յուլիանի. եր. 488.
 ** Անդ եր. 722.
 *** Գիւան Հայոց պատմ. Ժ. 64. Առաքել Գալթիճեցի. եր. 630. 2ամ. Գ. 516 «Իսոցա Ոգջա» № 94 Գ. 9. 44ա. Մի ժամանակագրութեան մէջ Պուականը «շօզ» է նշանակած։

Թէ ոչ չէր թողնիլ առանց յիշատակութեան այդ դէպքը*։ Իսկ 1543 թուին նա շարունակել և վերջացրել է իւր հօր սկսած և կրտսա թողած Ամասիայի Ա. Յակոբ եկեղեցու Յայտմաւորքը, վերջում աւելացնելով ընդարձակ յիշատակարանը։

«Արդ գրեցաւ սա ի թվականիս հայոց ի ջգր ի քաղաքի Աերաստիոյ՝ առ դաս ս՛ր ա՛ծածնին և ս՛ր յուսաւորչին, ձևամբ Քաթէոս քն՛յի և մեղսայնեիկ անձին Յովասափ սր՛կին, Քաղէոս քահանայի և մանաւանդ Յովասափի ընդարձակ յիշատակարանից երևում է, որ Յայտմաւորքի ստացողն է ոմն խոճայ Խըարըր, որի ծնողներն են Գրիգոր և Ղամար, որդին Յակոբ և եղբայրը Մկրտիչ, կինը Կուղիտ։ «Այլ և յիշեցէք զա՛ր Ա՛ծատուր պատրիարզն Կաստանա(ին)ուպոլսին, որ է քեռորդի խոճայ Խըարրին, և զհաւրեղրարան զԻանիէլն, զԱռաքելն և ըղթումայն, զՊարընքչան և զԱուլթանն, այլ և զՇամամն . . . Եւ այս խոճա Խըարիս հայրն Գրիգորն էր բնական ի Հէնու և ի կարմիր գլխոյն փախուցեալ եկն ի Սերաստիա ընտանեալք և որդի ն՛ր խոճա Խարն ևս գրել զգիրքս՛ ի հալալ ինչից իւրոց եւ ետ յիշատակ իւր հողոյն և ա՛ծ նախնեաց իւրոց ի յԱմասիա քաղաքին ի դուռն ս՛ր Յակոբն եկեղեցւոյն և ս՛ր Մինասա և ս՛ր Աւիսէնսին . . . »

Յիշել է խնդրում իրեն և իւրայիններին. «զիս զանպիտան Յվ՛սփս, որ ջըստ անկարութ՛ե մերոյ գրեցի եւ ծաղկեցի եւ կազմեցի զա՛ր տառս . . . » Այլ և յիշեցէք զԱկոբ արեղայն զհոգևոր հայրն մեր, որ աշխատեցաւ հետ պակասաւորիս ի կազմելն և շատ աշխատանք ունի ի վ՛ր մեր. զա՛ր Զաքարէն և զեղբայրն ըզԳրիգորն եւ զՅեակարեւ . . . » (վերջին ընդգծումը նոյն գրով վերած աւելացրած)։ Աւելի յաճախ յիշում է հօրը և մի տեղ էլ խնդրուած է յիշել մօրը. «որ շատ աշխատել է ի թխտին նիշաւն, զիրից կին Շահփաշան, և զտիրացու Յակոբն և զՊաղտատար պատուներեակն մեր, որ աշխատել է ի թխտիս կոկեյն»։

Արդէն յիշեցինք, որ 1548 թուին վախճանուեց Յովասափի եղբայրը Գրիգոր, որի յիշատակին յատուկ կաթիլ ունի գրած Այդ թուականին վերջնականապէս խմբագրած կամ գրած պիտի լինի և «Վասն լինելութեանս մեծ աշխատութիւնը, որի Ա. զլխի վերջում յիշատակութիւն կայ Գրիգորի մահուան մասին»։

Եւ եղբայրն իմ Գրիգոր ևս մեզ սուք կրկին
և դեզերեալ եղէ, քան զնա ի ծովին
զանիմաստ Յովասափ Սերաստիացին,
աղաչեմք յիշեցէք ձեր ս՛ր բերանին։

* Եր. 488։

Այս մասին յիշատակութիւն ունի և «Տնօրէնականացն Քրիստոսի» ստանաւորների վերջում, գրուած 1548 թուին, և նուիրած եղբոր և հօր յիշատակին.

Ի թվականիս մերոյ յինն հարիւրին

՝դ և ՚է եղև յաւերթոյ նորին

այս մի ստանաւորս եղաւ ի կարգին

Յովասափ անշարմար Աերաստիացին:

Նոյն թուականին կամ քիչ յետոյ պէտք է գրած լինի երկու Աննինքը՝ ա—ք և շի քէէն մինչև յայքն», որ մի ամբողջութիւն են կազմում, թէ եզանաւոր, թէ վերնագրով և թէ շափական կազմութեամբ: Երկրորդի մէջ հետևեալ երկասոր կայ.

Ընդ հողով թաղեցին, հեան սշ երևի,

է յիմար Յովասափ, զեղբայրս գովելի:

ԺԶ. դարու շորթորդ ստանաւեակի երկրորդ հնդամեակը Հայաստանի պատմութեան ամենագծրաղղ էջերից մէկն է կազմում. Շահ թահմաղի և սուլթան Սուլէյման Բ.—ի կատարի մըրցութեան տարիներն էին, երբ մեր երկիրը երկու կողմից ստնատակ եղաւ և սոսկալի աւերմունքի ենթարկուեցաւ: Այդ մրցութիւնն աւելի վաղ էր սկսուած 1531—1534 թ. թ., բայց նորոգուեցաւ 1548 ին, երբ Շահ թահմաղի եղբայրը Էլ—իսա Շրուանի կուսակալը, ապրտամբեց եղբորից և Պոլիս գնալով առաջնորդեց Օսմանցիներին շահի դէմ, գրաւելով Քաւրիզը: Իսկ Շահ թահմաղը իւր կողմից յարձակուեց Հայաստանի դաւանների վերայ և հասաւ մինչև Երզնկա, սպառնալով նաև Սերաստիային: Նա աւերեց բազմաթիւ գաւառներ, որոնք յիշուած են ժամանակի տարեգրութիւնների և յիշատակարանների մէջ, որոնցից յիշատակելի են իրենց ընդարձակութեամբ Յովհաննէս Արճիշեցին* և Քաղէոս վարդապետ Սերաստացին. վերջինս թէ ստանաւորով և թէ արձակ: Նոյն դէպքերը արձագանք են գտել և մեր Յովասափի երկու ստանաւորի մէջ, դոցանից մէկը 312^ա. «Փրկիչ մի տար զմեզ» թուագրուած է շինն հարուր նսուն և եաւթ» (=1548) թուին, իսկ միւսը 308^ա. «Վա մեղաց մեր մանացու», թէև անթուական, բայց բովանդակութեամբ այնքան մօտ է միւսին, որ անկարելի է այլ ժամանակի վերագրել:

Յովասափը մի ստանաւոր ներքող ունի (313^ա) «Յուխոեալ պատուէր» ուղղած ոմն տէր Մինաս Թոխաթեցու: Այդ անունով

* Դիւան Հայոց պատ. ժ. եր. 22. 50—59.—71: Ալիշան Հայապատում 595—595. Չամչեան Գ. 514:

և այդ ժամանակ յայտնի է մի տաղասաց՝ Մինաս դպիր Թոխաթեցի, որ 1563 թուին պանդխտութեան մէջ Լեհաստանի Լվով քաղաքում երգել է հարխայի մասին*։ Բայց ներքոյի առարկայ Մինասը բարձրաստիճան հոգևորական է. և ուրեմն տարրեր երգիչ Մինաս Թոխաթեցուց։ «Դիւան Հայոց պատմութեան» ժ. գրքի մէջ հրատարակուած է ի միջի այլոց և Յովհաննէս Սերաստացու նոյն քաղաքի առաջնորդների ժամանակագրութիւնը**։ 1536—1560 թ. Սերաստիայի առաջնորդն էր Էա՛ր Մինաս արհնու Ամենայն հաւանականութեամբ այս արհուն պիտի նուիրուած լինի «Յուխտեալ պատուէք» սամաւորը, որի մէջ աէր Մինաս Թոխաթեցին ներքոյուած է ոչ միայն իրրև շղէա և հով(իւ) քաջ և արի», այլ և

«Սահման մեկնիչ և լուծմուծքի
և երգերդոյն Սողոմոնի.
համարողակ վեց հազարի
և երկնաին բանքն ի կարգի***».

Զարմանայի է միայն, որ Յովհաննէս Սերաստացու ժամանակագրութեան մէջ Մինաս արհու գրաւոր աշխատութիւնների մասին յիշատակութիւն չկայ։

Չեռագրի վերջին թուականը 1564 թիւն է, որ տարարագրար վրիպել է մեր աչքից, բայց յիշում է մ. Մուրադ։ Սակայն սակ չենք կարող Յովասափի ձեռքով է գրուած թէ ոչ գրական գէղքում Յովասափի կեանքի վերջին թուականը կլինի, որից յետոյ այլ ևս տեղեկութիւն չունենք նոցա մասին։

Գ.

Յովասափի սամաւորները կարելի է հինգ մասի բաժանել. առաջին պատմական, որոնց մէջ պէտք է թուել և նորա սամաւոր յիշատակարանները, որովհետև նրանց մէջ ժամանակագրական տեղեկութիւններից դատ՝ արտայայտուած են հեղինակի ներքին զոացումները, մեղքի գիտակցութիւն, զղջումն, որով և պատմականից դատ նաև գրական արժէք են ստանում։ Երկրորդ խտատական և նոզևոր երգեր կամ կաֆաներ, երրորդ Սիբոյ երգեր, չորրորդ հին և նոր կտակարանի բովանդակութեան համառոտագրութիւն և հինգերորդ աստղաբաշխական և տոմարական գի-

* Արատանեան. Նոր Ժողովածու Ա. Թիֆլիս 1892. էջ 50.

** Եր. 593.

*** Յայտնութիւն Յովհաննու, յերասագէմ. 1905—1911. եր. ԻԱ.

տելիքներ. հասկանալի է, որ վերջին երկու տեսակի քերթուածները գրական առանձին արժէք չունին, մանաւանդ վերջինը, որ հարող էր արձակ գրուել:

Պատմական ստանաւորներն ու յիշատակարանները հետեւեալներն են.

- ա. 103^թ. Աղէքսանդրի պատմութեան վերջում, «Եւ զգրող այսմ գրի»:
- բ. 255^ա. Յերես անկեալ մեղօք ի լի»:
- գ. 255^ա—255^թ. Զմեղապարտս յամի»:
- դ. 291^թ. Յերես անկեալ արտասուելի» (Վասն լինելութեան մեծ քերթուածի վերջում):
- ե. 209^թ. Աւել անուն.
- զ. 220^թ. Սուք աշխարհի հայոց մեծին.
- է. 307^ա. Վա տեւեան տն Ներսեսի.
- ը. 295^ա. Աաֆայ վա աղէկ մանկանն.
- թ. 308^ա. Վա մեղաց մեր մահացու.
- ժ. 312^թ. Փրկիչ մի տարլ զմեզ ի փորձութիւն.
- ժա. 313^ա. Յուխտեալ պատուեր (Զօն Մինաս արհուն).
- ժբ. 315^ա. Յայանի եղև սերն ի լման.

Իոցանից ա—դ յիշատակարաններ են, ե—է պատմական ստանաւորներ անցեալին նուիրուած, իսկ ը—ժբ ժամանակակից դէպքերի հետ կապուած:

Երկրորդ տեսակի քերթուածներից հետաքրքրական են յատկապէս 209^թ. և 220^թ., երկուսն էլ նուիրուած Մուշեղ Մամիկոնեանի քաջագործութեան և մահուան. ինչպէս Յովասափը կաֆաներ է գրում իւր արտազրօւած և նկատարգած վկայարանութիւնների համար, որինակ երինէ կուտի վկայարանութեան կաֆաները 225^ա, 225^թ, 230^ա, 232^ա, նոյնն է անուժ և այտտեղ Ներսէս մեծի պատմութեան վերաբերմամբ. պատմական այդ քերթուածների հետ, նա տուել է մանրանկարչական պատկերներ, որպէս պատկերաւոր լուսարանութիւն բնագրի, որ շատ հետաքրքրական լինելով հանդերձ, հնարաւորութիւն չունինք ներկայ պայմաններում նմահանութեամբ ցուցադրելու մեր բնթերցողներին: Երկու ստանաւորի մէջ ևս նկատելի է ժողովրդական ոգի և վիպական նկարագրութիւններ. հերոսը հասակով բոլորից բարձր է, բաջ է առիւծի նման, որի ահից դողում են Ալանաց և Պարսից արքաները, սուրը «չարեքկանգուն երկարութիւն» ունի, որով ապագաներն էր պատում: Զին ևս վիպական է. սպիտակ, յուշկապարկի ամրակներով*, դադանի նման պատուոյ:

* Սուտ Ապիսթենեսի մէջ, Աղէքսանդրի մին եւս «հանց ուսեղ զինդ» ու շկապարիւն»:

Երբ որ հեծնոյր յիւր ահեղ ձին,
 և ձեռն անոյր դուր երկսայրին,
 Պարիսպ և բլուրք հարթ լինէին,
 Յանէ իշխան քաջ Մուշեղին:

Ինչպէս հուրը եղեգի մէջ, այնպէս է Մուշեղ թշնամու քա-
 նակում. բայց մի և նոյն ժամանակ նա վեհանձն է դէպի Թըշ-
 նամինս Ռուսնաւորների բովանդակութիւնն ստնուած է պատմա-
 կան աղբիւրից, բայց արտայայտութեան և ձևակերպութեան
 եղանակը ժողովրդական*:

«Մ.ս տեւրեան ա.ն ներսեսի» (307^ա) ուսանաւորը ոչ այլ
 ինչ է, բայց եթէ սուրբի անուան հետ կապուած յայտնի անվա-
 շերականի համառօտ բովանդակութիւնը, մեր միջնադարեան մա-
 տենագիրների և բանաստեղծների սիրելի նիւթերից մէկը, որ
 հողովում է նրանց գրուածքների մէջ՝ այլ և այլ եղանակաւո-
 շութիւններով և գործնով վառ պահուել հայ ժողովրդի հոգևոր
 և քաղաքական ազատութեան տենչանքները**:

Ժամանակակից պատմական ուսանաւորներից ուշագրութեան
 արժանի են 308^ա. «Մ.ս մեղաց մեր մահացու սե 312^ա» Փրկիչ մի
 սար զմեզ ի փորձութիւն շարինք, ինչպէս վերե յիշեցինք, Պար-
 սից և Օսմանցոց շահատակութիւնների տպաւորութեան սակ-
 զրուած: Հեղինակը պատկերացնում է հոգեբանական այն վիճա-
 կը, որի մէջ գտնում է ինքը և տապնապի ենթարկուած ժողո-
 վուրդը հետևեալ հակիրճ խօսքերով.

Զօրն կանցնենք մեք ի յահու:

Պահ քառ պահու. կուտանք մահու:

Բայց յոյս ունի, թէ Տէրը իւր սուրբերի օգնութեամբ

Զօղորմութիւն անբաւ հեղու.

Փրկէ զպառինս ի գալլերու:

Հայրենի գաւառների աւերմունքը և ստիպուած նոր վտանգը
 վիշա է պատճառում երգչին.

* Երկուսի ամբողջութիւնն էլ տես յօդուածի վերջում № 4 եւ 2.

** Աշոտ Բովհաննիսեան. Israel Ory und die armenische Befrei-
 ungsidee. 11—24. Յովասափը իւր մեռադոթ մէջ արտայայտել է նման
 բովանդակութեամբ մի այլ տեւսիլ. 256^ա—265^բ. Յիպէա առանց վերնա-
 գրի, բայց նոյն է Բերլինի արքայական մատենադարանի Ms. Or. Oct.
 1125. 48^բ. «Ազաթանի անյաղ» փրկիտփայի ասացեալ վ.ս նեւինն գա-
 լրօտեանն»:

Պատրաստեցան ի գալ տարու.

Աւեր անել երկրի նորու.

Վիշան էր բազում Յոսփասափուս:

Աւերուած դաւաններն են. Բաղէշ, Անուս, Էսսեն, Արղրուժ, Մուշ, Սպեր, Դերջան և Կեղի, Բարկրղ և Երզնկա*:

«Յուսփասափուս պատկեր տիրոխնին» (313^ր) ստանաւորի մասին խօսք եղաւ վերև. նա նախընտրւած է Սերաստիայի առաջնորդ Մինաս արճուն և բացի կենսապրակաւն-մատենադրակաւն տեղեկութիւններից ուրիշ արժէք չունի: Ժամանակակից անձի հետ կապուած ստանաւոր է և «Յայանի եղև սերն ի լման» ներքողը, նուիրուած ոմն «խոճայ» Ք՝մրշ-ին (Քամաւր): Ի նշով էր երախտապարտ մեր երգիչը այդ խոճային և ինչ անթիւ նրա հետ թղթակցութիւն է անեցել, յայտնի չէ: Յայանի չէ և գրութեան ժամանակը, թէև հաւանորէն 1548 թուից յետոյ սխալ լինի, նայելով ստանաւորի դասաւորութեան տեղին Զ-ի մէջ: Իբրև ստանաւոր ներքող յաջող կարելի է համարել իւր շերտ և սրտա-կերուար սրտայայտութիւններով**:

Սիրտս սիրեց քեզ բնական, աչևրս քեզ կարուտ մեան:

Իդրս սիրով և տենչական, դքեղ հարցանեմ ես յարածամ:

Անուշ գրուց պլպուլ նման, Թութակ Ղուժրին յմեր կմեան:

Զմայլեցաւ խելքս իմ անբան, սիրտս իմ սիրուտ ծովն ծփան:

Վկայարանութիւնների հետ կապուած ստանաւորներ են Էրինէ կուսին վկայարանութեան կաֆաները 255^ր, 225^ր, 230^ր, 232^ր, 249^ր, դարգարուած նաև մանրանկարչական պատկերներով. «Ստանաւոր կամաւոր աղբատին Յոփանխօին» 250^ր. և «Ստանաւոր նոր Վկային Ք՝ի Կսկնային» 251^ր.: Բոլորն էլ անհամ բաներ են. փոքր ինչ յաջող կարելի է համարել և սրտա-չարժ վերջինս, իբրև ժամանակակից դէպքի նկարագրութիւն:

Բայց շար գինւորքն այն Տաճկնին
Լցան թիւնաւք իբրև աւձին.
Վայր կոխեցին գնա ի գետին
Զլեզուն հանեալ և կարեցին:
Մանուկն ո՞պ գատիւժ կոչէր,
Հայէր յերկինս և հառաջէր,

* Ամբողջը յօդուածի վերջում № 5.
** Ամբողջը յօդուածի վերջում № 4.

Ոչ ոք չկայր բարեխօսէր,
 Նամ մարդ կարէր որ ազատէր:

Գլուխն ի բաց*, ձիւն ի կապին,
 Արիւն հոսէր ի վրայ անձին.
 Սիրաք բեկէին զնա տեսողին
 Երբ որ տարան ի մոյտանին:

Ոմանք զնա աղաչէին
 և այլք ահիւ ըսպաննային,
 Ոմանք փայտիւ հարկանէին
 և այլք սրով գաղտ խոցէին:

Կոկնան կապած կայր ի միջին,
 Ռ՛ւյ գառին (s!) ի մէջ գայլին,
 Հայէր ի յաջ դին ի ձախին,
 Լեզու շունէր ի բերանին**.

Աւելի հարուստ են Յովասափի խրատական — հոգևոր երգերը — այդպիսիներն են.

- ա. Յանեղ լուսոյդ ա՛ծային. «Մեկայ ա՛ն» վերնագրով 223^ա.
 բ. Վ՛ս հանդերձեալ գատաստանին. «Արարչագործն ած» 164^ա.
 գ. Ոտանաւոր վ՛ս ողորմութ՛ի և զ՛ սկզբանէ ք՛ս յաւատարա-
 նին» 265^ա.
 դ. Վ՛ս հաւատոյ, յուսոյ և սիրոյ. «Յիշէ գգործս բարի» 266^ա.
 ե. Ոտանաւոր վ՛ս խոստովանութ՛ի և «Հաւատամք ի ք՛ս» 266^ա.
 զ. Վ՛ս համբերութ՛ի և խաղաղութ՛ի. «Մ՛ք հարքն հոգևոր» 226^բ.
 է. Յանուն ա՛յ. «Անձն իմ յե՛ր ի շարիս աղանդացար» 267^ա.
 ը. Անձինք նոյն կարգի ի քէէն մինչև յայրն. «Քաղցր է ա՛ր»
 267^ա.
 Ճ. «Տ՛ք իմ զգած ա՛ծ բարի» 267^բ.
 Մ. Աշխարհիս սահմանն է հանոյ» 296^բ—297^բ.
 Ս. Վ՛ս հոգոյ. «Յերեւաննկեալ արտնաւալի» 295^բ.
 Ճբ. Յիշէ զքան աւետարանին 305^բ—305^բ.
 Ճգ. Սոստովանութ՛ն. «Մեկայ ա՛ր ինձ ողորմեալ» 311^բ.
 Ճդ. Սաւանաղեալ Գարբիէլին 321^բ—313^ա.
 Ճե. Սողոմոն ելեալ էր ի յորս երկին. 313^բ.
 Ճզ. Ա՛ծ իմ յոյս 315^ա.

* Բնագրի մէջ գտնի վերայ գրած թիւերը և տալս ալ-ի գլխին ք գրած Առհասարակ մեր Յովասափն աննաստառ է իւր ուղղագրու-
 Յեան մէջ:

** Ամբողջը հրատարակել են Ե. Մանուկեան և Լ. Աճարեան,
 Հայոց Նոր Ազնեքը, Վաղարշ, 1905, էջ 575:

Ընդհանուր առմամբ այս ոտանաւորներն անհարթ են իրենց շափերով և տափակ մտքերով ու արտայայտութեան ձևերով, բայց կան աւելի կամ պակաս ուշադրութեան արժանի կտորներ ևս: Այդպիսիներից են, ք. դ. թ. յ. ժք. ժդ նշանակումները վերևի ցանկում: «Վասն հանդերձեայ դադաստանին» ոտանաւորը մէկն է միջնադարեան տաղասացների սիրելի նիւթերից իւր պատկերաւոր բովանդակութեան պատճառով. Թրիկի և այլ բանաստեղծների կողմից այս նիւթը յաճախ մշակութեան է ենթարկուել. այդպիսի մի գեղեցիկ քերթուած է անյայտ հեղինակի «Ողբ ի վերայ դատաստանին և դժոխոց» հրատարակել է Զորանեան. հեղինակն ազդուած է և բառացի վախճանակութիւն ևս ունի Թրիկից*, ինչպէս և մեր Յովասափը իւր հերթին ազդուած է այս անանուն հեղինակից:

«Վ՛ս հաւատոյ, յուսոյ և սիրոյ» (266^m) ոտանաւորը մի ներքող է քրիստոնէական այդ երեք առաքինութիւնների.

Ո՞պ ծառի նման հաւատ ամբուի՞ն
 Տերու յաւայ նման՝ հոգոյն շարժական
 Սէրն է ծաղիկ ծառոյն՝ հոտ անմահութի՞ն
 Արով պաղաքերին բարի գործք մարդկան:

Ինքնարձնադատութեան, մեղքի գիտակցութեան և զղջման զգացումներն ու մտքերը Յովասափին չի յաջողուած այնպիսի թարմութեամբ, պատկերաւորութեամբ և զգացումով արտայայտել, ինչպէս այդ տեսում ենք Թրիկի, Պլուզի և Բուշակին վերադրուած քառեակների մէջ: Բայց սեպհական մեզքի գիտակցութիւնը նոյնպէս մեր բանաստեղծին զբաղեցնող մտխոններից մէկն է: Այսպիսի մի ամբողջական և յաջող կտոր ենք համարում «Տ՛ր իմ գղած ա՞ծ բարի» 267^բ. ոտանաւորը, որ ճաշակ տալու համար գնում ենք յօդուածիս վերջում (№ 5): Այս կարգին են պատկանում երկու «Անձինք»-ները է և Ը: Մասամբ իւր. սննձի հետ, մասամբ խրատական է, «Վ՛ս հոգոյ ոտանաւոր»-ը, որ նոյնպէս ամբողջութեամբ գնում ենք վերջում. (№ 7):

Բայց իբրատական քերթուածների մէջ ամենից յաջողն է իւր բովանդակութեամբ և մտքերի հարստութեամբ «Աշխարհիս սահմանն է հանց» (296^բ—297^բ) կաճիան. այստեղ արժարժուած է աշխարհիս անցաւորութեան և հոգևոր բարիքի յաւիանական նշանակութիւնը: Մարդիկ և բրէք չեն համում իրենց երկրաւոր նպատակի վախճանին, որքան աշխատում են լրացնել այն, այնքան պակասաւոր է մեռւմ. մի և նոյն հիւօր և օրօրաց է շինում

և դադարող մէկը դալիս է, միւսը գնում: Աշխարհը խարստիկ է, մարդը գիշեր, ցերեկ աշխատում է, կարծելով թէ իւրն է այն, բայց մահը զրայ է համարում և իղձերը կիսատ թողնում: Բոլոր ծնունդները մեռնում են: Կարծատե ուրախութեան լացն է հեռում: Երբ ծուռում է «Փայտաբոս» փորում է բազմաթիւ ցանկեր և մարդը փոսն է բնկնում, մինչ իւր ձգտումների յեռնից է: Աղամից սկսած ոչ ոք չէ հասել իւր իղձերի լրման, թևերի ծայրը կարամ թռչունի նման պայպուն կլինի: Հոգի թագաւորներ և իշխաններ թողել են իրենց ոսկի պալատներն ու հարստութիւնը, լիքը բաղաբներն ու բերդերը ու մահուան հրամանին հարստակուել: մարդն աշխատում է առանց միջոցների խարստութեան, կալուածներ և գանձ ձեռք բերում, չիմանալով, թէ վաղն ի՞նչ է լինելու: ով էլ ուտէ, պատասխանատուն ժողովուրդն է: Աստանան հնարք է որոնում մարդկանց զրկել բարի, գործից, աշխարհւո բաղցր է թւում, բայց նա երազի նման անցնում է, ինչպէս իրական չեն երազում տեսած բարիքը: Դու մի հաւատալ աշխարհին, նա խարստ է, հետևիք Տիրոջ խօսքին, «մալի, գանձի մի ցանկարք, յիշիք մահուան օրը: Աղօթքով և ողորմութեամբ անկրկիւղ կարող ես լինել դժոխքի դէմ. մի քննիք ուրիշների մեղքը և բոլոր սրտով սիրիւ Աստուան, բարիք գործիք, քանի բաղդի անխը չի գարձել, ապա թէ ոչ, ոչ մի երկրաւոր ոյժ օգնել չէ կարող քեզ: Երկրաւոր կեանքը նման է խիստ նեղ և բարակ կամուրջի, որի տակը ծոփն է ծփում, բայց մարդիկ քամահարում են այն կոյրերի նման: Աստուծից, սրտեղից եւ դալիս և սէր գնում: գերեզմանները դիտիր, թէ ի՞նչ է այդ, աշխարհւո նման է երկու դմով քաղաքի, մէկով մանում է մարդը մերկ ծնելու ժամանակ, միւսով դուրս դալիս գարձեալ մերկ մեռնելիս*:

Ահա մօտաւորապէս այն մտքերը, որ արծարծում է Յովաթափը իւր այս աշխատութեան մէջ. բնականօր տուածը նոր չեն նորա. հետու չերթանք, հէնց միջնադարեան նախընթաց բանաստեղծների՝ Յրիկի, Պլուզի, Նադաշի, Բուչակի, Աղթամարցու երկերի մէջ յաճախ յեղյիղուած են այս մտքերը, և մենք կտեսնենք, թէ Յովաթափ որոշ մտքեր և գարձուածքներ առել է իւր նախորդներից, բայց և այնպէս հէնց միայն այս աշխատութեան համար Յովաթափը իւր տեղը պիտի ունենայ մեր միջնադարեան տաղասացների շարքում: Հեղինակն այստեղ իրօք համակուած է իւր արծարծած գաղափարներով, ցօղուած ներքին զգացման մաքուր կաթիլներով: Մենք տալիս ենք այն յօդուածի վերջում

* Հայ էջեր. 52.

№ 7) նայն իսկ հեղինակի ուղղագրութեամբ և սրբագրութիւններով, թէև հրատարակուած է Չորանեանի կողմից*:

Յովասափի երգերի մի այլ խումբը Սիրոյ երգերն են, որոնց մեծագոյն մասն իբրև յետևից ատանց բաժանումների հրատարակել է Տէվկանց**։ Բերլինի 2-ի մէջ յատուկ դժերով և չուսանցքի նշաններով բաժանուած են իբրբից, և վերջին տներում հեղինակի անուան յիշատակութիւններն էլ անպայոյց են, որ նորատարեր ամբողջութիւններ են կազմում։ Բերլինի բնագրի մէջ հեղինակը ուղղագրական և այլ փոքրիկ տարբերութիւններ ունի իսկ Տէվկանց «Յիս նայէ շիտակ»*** երգի վերջում մի տուն աւելի. «Քու իթս խամ, թանաքս խամ» են, որ հեղինակը կարող է աւելացրած լինել։ Ընդհակառակ Տէվկանցը չունի «Յեր կու նայի» ամբողջ տաղը։ 2-ի մէջ ևս գրուած են այսպիսի յաջորդականութեամբ.

1. Յեր կու նայիս դու յիս ճկրով 168^բ.
2. Յայն առաջի ժամանակին 269^ա.
3. Ո՞նց շիս խղճալ աղամորդուն 269^ա.
4. Վարդենեաց մէջ տեսայ նաանք 269^ա — 269^բ.
5. Այտաւք տեսայ գինք դարդարած 269^բ.
6. Սիրուն ևս քան գնունենի 269^բ.
7. Փառքն և գհամբուն լսեցի 270^ա.
8. Յիս նայէ շիտակ 270^բ.

Յովասափ իւր Սիրոյ երգերի մէջ Բուշակի գեղեցկութիւնն ու բարձր ներշնչուիմ չունի. տեղ տեղ նայն իսկ բոնագրութիւ է յանգերի կազմութեան և մտքերի արտայայտութեան մէջ. պատկերաւորութիւններն էլ մասամբ հետևողութիւն իւր նախորդների. սակայն դուրկ չեն սոքա ևս հաս ու կտոր գեղեցկութիւններից։ Եթէ Սիրոյ երգերի դասաւորութիւնը կապ ունի նրանց ծագման ժամանակագրութեան հետ, կարող ենք ասել, թէ մի ներքին դարգացում կայ դրանց մէջ, սկզբում սիրունին իրեն սառն է պահում կամ փոփոխական. առաջ ասուն. խօսուն էր, իսկ յետոյ ծօտից անցնելիս ոչ միայն չի խօսում, այլ և թոթվում է.

* Այո միտքը գրեթէ նայն բառերով Յովասափ կրկնել է եւ իւր «Վասն յիմելութեան» մեծ աշխատութեան է. գլխի վերջում. Բերլինի Ms. or. Quart. № 805. 281^ա.

** Հայերդ, մեղեգիք, տաղք եւ երգք. Արիստակէս վարդ. Տէվկանո, Թիֆլիս. 1882. 409—416.

*** Անգ. 416.

բանաստեղծը քննադատում է նորա խառութիւնը, որ անխիղճ կերպով սպանել է կամենում իւր գերուն:

Ա՛ժ երես աղվորութիւն
Չասաց լափէ զիմ ծառանին:

Նա գանգատում է սիրունու անտարբերութեան վերայ, մինչդեռ ինքը՝

Կիշեր շունիմ հանգրսութիւն,
Ծփամ քան զնաւ ի մեծ ծովուն.
Յորեկ սահուն և երերուն,
Ի՞նչպէս ելնեմ հետ քեզ ի հուն:

Նա խնդրում է Ստեղծողի անունով.

Ղերեսդ քաց նման վարդին.
Մի թողուր զքո հասրաթ մանկանն.

Մեր բանաստեղծն էլ իւր նախորդների նման սիրունու գովքն անում է արևելեան շափաղանցութիւններով և պատկերաւորութեամբ. նա Չինուժաշինի քաղաքի նման է, լի անգին դահարներով. համասփիւս ծաղիկ է, իմաստութեան շնորհով լի, բամբակն տարտի բժշկարանն է, նշենու և ձիթենու տունը, քաղցրահաշակ արմաւենի, անմահութեան պտուղ, սրին ամենքն ևն փափաղում: Սորա հետ ունի և սիրունու իրական գեղեցկութեան նկարագրութիւն.

Սպիտակ երես և թուխ աշեր,
Ուներն ի նմայ կամար կապեր:

Նորա գէմքը պայծառ է՝

Քան զվարդն ի մէջ կոկոնին.

Կամ՝

Աչքն է ծովեր, վարսերն սակի:

Երբեմն էլ չգիտէ, թէ ինչք գովէ՝

Չան կես ու մեծ ուներն սակի,
Թէ զճօճայ վզին պատկեմ:

Սիրունու տեսքը, խօսքը, նշանացի շարժումը բնականաբար խելքից հանում է բանաստեղծին, քաղում նորա հողին: Բայց սիրունին էլ անտարբեր չէ, նա էլ վերջապէս յայտնում է իւր փոխադարձ սէրը և երբեմն առանձին նազանքով՝

Մանրիկ մանրիկ կու ծիծաղի
Աչքն և ուներն կու ճօճի:

ցոյց տալով ծածուկ չանապարհ, որտեղից սիրեկանն իւր

ճօա պիտի գայ: Բանաստեղծն այժմ ուրախութիւնից զմայլուած չնաշխարհիկ գովեստներ է գեղում նորա զլխին.

Դու ես ակն և գոհար անգին
Քան զպայծառ վարդ յառաւօտին
Չէ բերել մա՛րբն հողածին
Քան զքեզ անուշ պտուղ բարի:
Ի քո պատկերն ով որ նայի,
Կամ անուշ խօսքառ ում հանտիպի
Աշխարս ամէն իբ կու թվի . . .

Հետաքրքրական է և գեղեցիկ բանաստեղծի և սիրուհու մէջ եղած հեռակեալ տրամախօսութիւնը.

Ասցի սիրուն քո Ստեղծողին,
Մէկ վարդ մի տուր քո պաղշայէն.
— Ասաց վախճմ պարտիզպանէն
Հանէ զպլպուլն ի յարեէն:
Ասացի անչափ ջանք պլպուլին
Որ տիրանայ պայծառ վարդին.
Ծնծայ դնէ ի վրայ սրաին . . .

Գեղեցիկ է նաև հեռակեալ պատկերը՝

Վարդենեաց նման բոլոր, ելեր ես ձոճան,
Բաղեղի նման սլոր, ես քեզ վախճուման:

Հին և նոր կտակարանների բովանդակութեան հետ կապուած բերթուածներն ամենից բնդարձակներն են. առաջինը՝ «Վ. 7^ա լի-
նկութե արարածոց» սկս. Աւրճնեմք զանեղ բնութի. 275^ա և
երկրորդը՝ «Տնարթնակամայն Բ. 1» սկս. Աւրճնեմք զհայրն ա՛ճ.
292^ա.: Հնգհանուր առմամբ այդ աշխատութիւնները Ս. Գրքի
համառօտադրութիւններ են. բայց հեղինակը յաճախ շեղուած է
վաւերական աղբիւրներից և ժողովրդական աւանդութիւններով
կամ անվաւերականներով, ինչպէս և մեծութիւններով և խորհր-
դածութիւններով, երբեմն և արատելիաւոր նկարագրութիւններով
համեմտմ իւր պատմութեամբ: Հրեշտակների ստեղծագործութիւնն
ու զատակարգութիւնը, երկնքի պարճունակների և ճգորակների
մասին աճում է. Երանեախո Արիստրոպոսոց, Արիստոսելից և
այլ առմարական աղբիւրներից, սրանց մասին յիշում է Բ. և ԲԷ.
դասիւններում: Այս բոլորը նա քաղում է նախնեաց թարգմանա-
կան մատենադրութիւնից, յիշելով և Անանիա Արտակացու անու-
նը: Մեկ հետա կրպնէք մի առ մի համեմատութեան ենթարկելի

և զոչց առաջ ազգրիւքնեքը. աչգոյլոսի մի աշխատանք հարկ կլինի
կատարել այն ժամանակ, երբ հնարաւոր լինի հրատարակել «Յո-
վատափի գրութիւնների ամբողջութիւնը»։ Մենք այստեղ կամե-
նում ենք միայն ցուցումներ տալ վերի յիշուած մաքի հաստա-
տութեան համար։

Նոյր տապանից դուրս գալով (278⁰), շինում է Նախիջևան
քաղաքը, իսկ երկիրը բաժանում որդոց Երևանում։

Ելեալ Նոյ և շինեաց յանաջ գնախոջման

և զերկիր բաժանեց որդոցն շերեան։

Փարաւոնը փորձում է Մովսէսի անմեղութիւնն այնպէս,
ինչպէս Մարտելիքը մեր ազգային հերոս Փառթիւն² արիշտոն-
քով հեղինակը իւր պատմութեամբ ժողովրդական սարքեր է
մտցնում։

Էառ արքայն ի գիրկն զՄովսէս պատանին

Նա գձեան ձղեալ մորաւն Փարաւոնին.

Չոր բարկացեալ արքայն էզարկ ի գետին

Ասաց. թշնամի են ստբայ մեր ազգին։

Երկու աման սակի և կրակ լցին

և զազայութիւնն այնիս փորձեցին.

Ետևա աղայն զկրակն պայծառ քան զսակին,

Ասեալ ձեռամբ, լալով կղիբ բերանին։

Այրեալ ձեռքն և լեզուն ի մէջ բերանն

Ապայ թէ խեղճ կհառ, և ոչ սպանին.

Մեծացեալ կղև գլուխ հեծկլին.

Առաջի արքային ի պատերազմին։

Սողոմոնի պատմութեան մէջ (ԺԲ. գլ. 28⁴.) նա մտցնում
է նոյն իսկ ժողովրդական հաւատք և նախապաշարում. Սողոմոնը
հնազանդեցնում է զեկրին.

Խնդրեաց ի Սինայէ դատխաակ Մովսէսին

և ևզ զքելիար ի յաջ մատանին.....

Գամսահոսի մօտ բերդ է շինում, որի երեքսակ պարսպի
քարերը գլեքն են բերում. նոյն իսկ տաճարի շինութեան՝ «Ի
կայն Առնայու ի սիրտ ք²ի», քարերը դեկն են կրում Սողո-
մոնի հրամանով։ Յովատափ ունի և մի արիշտոնաւոր Սողո-
մոնի մասին 313⁵. «Սողոմոն ելեալ էր ի յորս երկին», ամբողջա-
պէս դարձեալ ժողովրդական աւանդութիւնների հիման վերայ։

Նոյնը կարող ենք առել և Ն. Կառակարանի վերաբերութեամբ.
Յիսուսի Մուսնդն ու մանկութիւնը, Մկրտութիւնը, Գայժառա-

կերպարները պատմում է ասարեր, աշտարաններից, անդաւեր
աղբիւրների հիման վերայ, այս մասին առիթ կունենանք խօ-
սելու հետեւեալ գլխի մէջ՝ այն արան ինչ որ մնայ

Դ.

Յովասափի նշանաւոր տաղերից մէկը ինչպէս տեսանք,
«Աշխարհիս սահմանն է հանց» քերթուածն է, այստեղ էլ երևում
է ամենից աւելի մեր միջնադարեան նշանաւորագոյն երգիչների
և տաղասացների ազդեցութիւնը, այն է Ծրիկի, Նազաչի, մա-
սամբ Քուչակի և Գրիգորիս Ազթամարցու:

Ծրիկի «Անդդէմ Փալաքին» ստանաւորի ազդեցութիւնը
երևում է Յովասափի 4-րդ, 15-րդ և մասամբ 19-րդ տների մէջ
Ծրիկ. Հայ էջեր 39. ստաջին տուն.

1. Է՛յ Ծալսմ երբ ծախս մարդուն, գօրն ի բուն փորեա նորա հըր,
Յորժամ դու քակես ըզարինն ու շթողուս, որ դաննայ սրոր...
— Հայ էջեր. 39. հինգերորդ տուն.
2. Յորժամ որ ի յեա քակիս ու ձրգես ի յաչքըդ խոլոր
Ոչ թուզի՞ որ դալամն օգնէ ի ոչ հարիւր հազար ձիաւոր...

Ձեռ. Տիրայր կախակոպոսի ԺԹ. ստանաւորը*:

... այս կենցաղս յերակ խարող է,

3. Պանիկ մի խնդալ կուտայ, բայց յեակի լայց կու պահէ.

Ձեռ. Տիրայր կախակոպոսի ԹԳ. նաև յաւելուածի Գ. անյայտ
հեղինակի «Արտաք խմաստնոց» ստանաւորի մէջ.

4. Հայլոց մեզք դու մի բններ, զքոյդ յերակ մտաւքդ անդիճէ.
Հաստուած մտա ի քիզ դու տես, դժահուդ աւրն դու յիշէ
Ձեռ. Տիրայր կախակոպոսի ԹԷ.
5. Ձանս ու բարի գործէ, որ յանդէն շլինիս յեաին.
Ձեռ. Տիրայր կախակոպոսի ԹԸ.
6. Ի գերեզմաններն ի վար հայիսց, տես թէ քանի մարդ կայ ի շար.

Յովասափի 4-րդ տունը, պէտք է համեմատել Ծրիկի 1 և 3
հատուածների հետ.

* Տէր Տիրայր կախակոպոսը պատրաստել է «Ծրիկի Դիւանը» քաղ-
մաթիւ 22-ի (սամեմատուժեամբ), սիրայիք պատրաստակա մուժեա իր մեր
տրպանագրութեան տակ, որաւ իւր 2-ը բովանդակութեան ծանօթանալու
և հարկաւոր համեմատութիւնները կատարելու:

Աշխարհիս սահմանն է հանց, ով ծնել ի մահ կու գնան,
Պահիկ մի ուրախ պահէ, յետև շատ ի բաց կու կենան,
Փալաքն եփ ծախ մարդուն, կու փառք ցեղ ու ցեղ դարան...

Յովասափի 15-րդ տունը պէտք է համեմատել Ֆրիկի 2 և 5 հատուածների հետ.

Աշխարհիս սահմանն է հանց, չի թողուր մարդն բոլոր,
Յանկարծ դիպեաձոյ բերէ և արնէ զինքն շոլոր մուր,
Ջանայ ու բարի գործէ, քանի բախան բերէ քեզ ուր,
Թէ չէ կփ քակէ զշարխն, շաւղնէ ո՛ր ձիաւոր:

Յովասափի 10-րդ տան «զար մահուն մտաց մի հաներ», 4-րդ տան «զալոց մեղք դու մի քններ և սիրէ զԱ՛ժ դու բոլոր», պէտք է համեմատել Ֆրիկի 4-րդ հատուածի հետ: Նոյնն է և Քուշակի անունով հրատարակուած խրատական ժգ. քառուկը, որով և դժուար է ասել, թէ սրտեղից է ասել մեր հեղինակը:

Յովասափի 18-րդ տուն. «Գնայ ի գերեզմաններն միտք արայ, թէ յինչ կու նմանի» պէտք է համեմատել Ֆրիկի 6-րդ հատուածի հետ:

Հարց է, թէ ի՞նչ հանապարհով է կատարուել այդ ազդեցութիւնը. Փալաքի մի քանի կարևոր տողերը, սրտեղից ազդուած է Յովասափը և աւելին, գտնոււմ ենք և Սուտ Կալիսթինեսի Աղէքսանդրի պատմութեան կաֆաների շարքում:

Աղէքսանդրի պատմութեան կաֆաներ են գրել Թաշատուր Կեշառացի, Գրիգոր Աղթամարցի և նորա աշակերտ Զաքարիա Կալիսթոս Գնունեաց*, որոնց անունների համաստապրութիւններն էլ նշանակուած են լուսանցքում իրենց կաֆաների զիմաց: Ներկայ պատերազմի ընթացքում Արարից բերուած և այժմ 1522 Ք-ը կրող Զ-ի մէջ, մի քանի կաֆաների զիմաց նշանակուած է «փ» համաստապրութիւնը. նոյնն ունի նկատուած և Տաշեան ծանօթութեան մէջ նշանակուած աշխատութեան մէջ (եր. 137). արդեօք «Փրիկ» ասել չենք կարող. բայց հաստատ է, որ կան կաֆաներ, որոնց զիմաց ոչինչ գրուած չէ, և բառացի նոյնանում են կամ կապ ունին Ֆրիկի «Փալաքի» 1, 4, 5, 7, 8 և 9 տների հետ (Հայ էջեր 39—40): Այդ կաֆաներից մի քանիսը

* Տաշեան. Աստուճնասիրութիւնք Ստոյն Կալիսթինեայ. Վիեննա, 1892. — Կոստանեան. Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը. Փրիկիս, 1895. — Ակիմեան. Զաքարիա Կալիսթոս Գնունեաց եւ իւր տաղերը Վիեննա, 1910 թ.

կցուած են բնագրին, ինչպէս № 1522-ից առնուածները, և ոմանք վերջում, առանձին՝ ինչպէս № 479 առնուածները:

№ 1522

- 133 Ետեւում շարինն ի յետ քակի ու ձգէ ի յաշքըն խալոր.
Ոչ գաւրք և ոչ մայն աւղնէւ լոչ հարիւր հազար ձիաւոր.
Տանի նեղ տեղաց ամէ, զինչ մտլոր տապան միաւոր.
Հարաւ է ի վայր ձգէ, թէ եղբայր է կամ կարկոր:
- 139 Եր. Չարիքն պատասխան կուտայ Դարեհի, սասցի ցընոր
Քանի եմ մտալար եղել, չեմ տեսել քան զքեզ մտլոր.
Թէպէտ որ ես հուքմ ունիմ, չի կարեմ տալ սակի աթոռ.
Հրամանն ա՛յ լինի, զով պիտի առնեմ թագաւոր:
- 154 Ետեւում շարինն ի յետ քակուի, յուշ թողու, որ անկնի ի խոր
Յուցնէ ըզկապին շարին, թէ զայա լից ի հոգս էի ցնոր.
Տանի հանց կապի ամէ, զինչ Դարեհ յարեմնն ի մտլոր
Չչունչն է ի վեր քաշել, որ յերէկ էր մեծ թ՛գր:
- 156 Փառք քեզ արարիչ Ա՛ժ, զու միայն հըզաւր թ՛գր.
Զով սիրես հըզաւր առնես, զով տեսա առակ հեռաւոր.
Ո՛ւ պ Դարեհի եղե, որ ինքն էր խրոխա թ՛գր
Այսաւր է ի հող մըտեր, սայ տեր զթագըն վառաւոր:

Ազգերանգրի պատմութեան բնագրին կցուած կաֆաներից զատ, 22-ի մէջ առանձեն կամ նոյն վէպի վերջում կան այդպիսի կաֆաների ժողովածուներ, որոնք մասամբ միայն նոյնանում են բնագրին կից եղածներին: Լիմից քերուած № 479 2-ը, որ ընդօրինակուած է 1845 թուին երկու օրինակից նոյն անապատի Երնիկ միարան Վանցի Թօփուզեան Յակոբ վարդապետի ձեռքով, վերջում ունի այդպիսի կաֆաների մի ժողովածու: Տարաբաղդարար գրիչը չէ յիշում, թէ ո՞ր թուականի 22-ից է արտագրել, բայց յայտնում է, որ օրինակի մէջ ևս այդ կաֆաները բնագրի մաս չեն կազմել, այլ դրուած են եղել վերջում. «Մնացեալ կաֆայքն ս՛ք են, զորս յետոյ գրաւել ի վերջն գրել էին ի յօրինակն, յորոց թէ՛ պ և զտանի ինչ ինչ ի սկիզբն, վ՛այ և ես ասա դրեցի»: Այս կաֆաների վերջին մասը մի ամբողջութիւն է կազմում բոա բովանդակութեան, կապուած Դարեհի մահուան հետ, և այդտեղ է, որ դարձեալ երևան են զալիս մի քանի տողեր Ծրիկի մտալարի բառացի նմանութեամբ*:

* Լիմ անապատից պատերազմի բնագրում այստեղ քերուած էր այժմ № 556 2-ը, 79^բ. զրեթէ նոյնութեամբ ունի № 479-ի Յակոբ

լայտ անձնաւորութիւնս, սոս ալժժ գծուար է քրոջի մեր ձեռքը
 եղած ասեղաներով: թէ՛ հակուած ենք ընդունելու, որ Իրիցոր
 Աղթամարցիին է. ըսյց հետարքերակուն է այն հանդամանքը, որ
 22-ից անուշ մի կրկնում են եղել նոնա Աղեկարեղի պատմու-
 բանն. և մենք սեւեռած ենք նայնութիւն այս բանեակներէից մէկի
 (Հայ էջեր. եր. 90, սասաջին քառեակ) և Յովասափի Անշխարհիս
 ասեմանն է հանցք քերթուածի սասաջին տան հետ, որ հրատա-
 րակիչն է, նկատել է: Սորա վերայ կաւելարչներ նսնն, որ նոյն
 Փահլուզի երկու արիշ քառեակ կրկնուած են Յովասափի մի այլ
 աշխատութեան մէջ, որի մասին իմար կլինի յետոյ. և վերջապէս
 Յովասափի 15-րդ տան մի ամբողջ հէս տող շջանաւ և բարի
 գործէ՝ բառայի նայն է այս քառեակներէից մէկի կէս տողը հետ
 (Հայ էջեր. եր. 90, երրորդ տան, երրորդ տող): Այս փոխա-
 սութիւնները կարող են լինել Փահլուզի կափաների հեղինակից,
 նայն իսկ, կարծում ենք, հաւանականն այս է, սակայն Յովասափի
 12-րդ տան և Աղեքսանդրի պատմութեան Իրիցորիս Աղթամար-
 ցու անունով** մի կափայի ասնշութիւնը անձխակի փաստ է
 մեր արծարծած վերեի մտքի: Այդ կափան հետեւեալն է:

Այս կեանքս է յերայ նման, զինչ գարթնու լինի փոշիւան.

Ի քուն զինքն իշխան գիտէ, երբ գարթնու, աղբաւ է, և անբան.

Թէ քաղցել է, հանց տեսնու, քրջանայ, կարգաւ, անպիտան.

Յովասափի մէջ այսպէս է այդ տանը. 3 անգամ քրջան

Անշխարհիս ասեմանն է հանց՝ զետ կրող է զնորական լայնի

Շուտով անցնի երանն և բաղում է անան ի զմանն

Թէ քաղցել է, հանց տեսնու, թէ ծարաւ՝ հարցոյց զմիմանն.

Երբ որ գարթնու ի քունն, իսխա գրանարից և շա՛մ մի շխան

* Աղթամարցու աղբարք արկիս է կաւ Պրուզի քրոջի նկ. 2-րդ տ. որ
 բարի գործէ, որ լոնդոն գրնու յետոյ. Պրուզ. 2-րդ տ. որ գործէ, բարիս
 յետոյ լինի փոշիւան. Տիրայր կայի կապար մեաւերս. նարանկից է ասել
 Պրուզ. քաղցարի յեղեմակը. «տեսնու» որ բարի գործես, որ անդ լնն լինիս
 փոշիւան. նայն Պր. 3-րդ քաղցի մէջ Իրիցորիս Աղթամարցիս. «քունն»
 բարի գործել, որ լինի ի գրնու անարի. «իսկ զանարիս մէջ» ասեմ
 և բարի գործէ, զի կարանքն ընդ կու հայն. (Պրուզ. քաղցար) 5: ասեմ
 անք. քնմեղքուածով. քաղցար զն. քանն սկիզբակն իրից քրջ

** Աստուածու. Իրիցորիս Աղթամարցիին եւ իւր ասեղերը. Թիւր-
 իս. 1878 Վր. 127

*** Երես անոյր նման է. Պրուզի

Երեսից որ հրատանն արայ, որ Պատմ. Թ. արոյ յինեւայ.

Աղեկարեղի մէկն էրմայ, նայն իւր բա՛ն պանդա թ. Ս. այն

2-րդ. Տիրայր և փոխապար սերդ Պրուզ փարկաղեոի անարիս. 2:

Սակայն Կրիզոստոմն էլ իւր հերթին օգտուել է մի այլ աղբիւրից, որ ըստ Տ. Տիրաչը կախկոպոսի Ծրիկն է:

Աշխարհս է երազ նման, որ լինի մէկ մ'անուշ ի քուն

Եւ ի քուն լինելն ի ներս, գունձ գունու անթիւ և անհուն.

Խնդալոյն ցընծայ իւր սիրան և ուրախ էր գունձին սիրուն.

Եւ հանց համարէր ի միտքն, թէ լինամ իշխան մեծատուն:

Երբ ինքն ի քնոյն զարթեալ, և տեսաւ, երազ էր ի քուն

Յայնժամ փոշիման գարձաւ ի վերայ իւր շատ խնդալոյն:

Ահնարկուած այս բոլոր կէտերում Ծրիկը Յովասափի աղբիւր եղել է միջնորդարար. մի տեղ միայն թւում է, թէ կայն անմիջական կարող է լինել, Ծրիկի 3-րդ հատուածը և Յովասափի 4-րդ տան երրորդ տողը, երկուսի մէջ էլ կրկնուած է «պահիկ մի» բառը շարունակութեան հետ, եթէ այդ նմանութիւնի պատահական չէ. տողի միտքն ամբողջապէս Յովասափը կարող էր և Նազաշից առած լինել: Մի երկրորդ այդպիսի անշուքիւն է Ծրիկի 6-րդ և Յովասափի 18-րդ տան երրորդ տողը:

Ե.

Նազաշի «Երազ է ու սուտ» ստանաւորի* աղղկցութիւնը նոյնպէս երևում է Յովասափի «Աշխարհիս սահմանն է անց» երկի վերայ. այս ստանաւորի կտկան միտքը գարձեալ աշխարհիս անցարութեան դադափարն է, ուստի և անհասկանալի չէ, որ Յովասափն օգտուէր նորանից: Մենք ձեռքի տակ ունինք նաև № 356, 101^բ Ձեռագիրը, որ չորս տուն աւելի ունի սկզբում կոստանեանի տպագրածից:

Նազաշ

1. Երազ է ու սուտ, եղբարք, աշխարհիս բաներն ի լման
Հգուր թ՛գր, իշխանք, պարսնայք ու սուլթան ու խան.
Նինկցին բերթ ու քաղաք դարպասներն ու շատ դատեցան
Յևաոյ գէմ անաէր թողին ու մասն ի հոգն չի գնդան:
2. Մի գիրկ աշխարհիս ամեր, մի կարծեր, թէ քեզ տի մեան.
3. Աշխարհս ոչ ամփայ ունի, ոչ արեր է մարդոյ բարի.
Սևուրք մի խնդալ կուտայ, բայց յևաոյ ի լաց պահէ.

* Կոստանեանց. Մկրտիչ Նազաշ եւ իւր տաղերը. Առաքարշապատ
1358. Եր. 5.

Աշխարհիս մի հաւատար, զօրն ի բուն սուտ կիսօտի
Չինչ որ խոստանայ մարդոյ, չի պահէ զիւր խաւօքն ի տեղի:

4. Մալի հասրաթ մի լինիւր . . .

Յովասափ.

Երկրորդ տուն, երրորդ առդ,

Նայ գիրկի ՚ի ամէ. . .

